

## ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

**Փնտռել զքրիստոս  
զայն երկրպագելու նպատակով**

«Մենք... եկանք երկրպագելու իրեն» (Մտք. 2.2): Մոգերը նորածին Փրկիչը տեսնելու հետաքրքրութենէ մղուած չէ, որ կը փնտռէին զինք: Անոնց նպատակը իրեն երկրպագելն էր: Տարբեր նպատակով պէտք չէ փնտռենք Քրիստոսը: Այսօր որքան մարդիկ կան, որոնք եկեղեցի կ'երթան ո՛չ թէ հանդիպելու Քրիստոսի եւ երկրպագելու իրեն, այլ՝ հանդիպելու իրենց բարեկամներուն: Եկեղեցի կ'երթան ո՛չ թէ լսելու Քրիստոսի ձայնը, այլ լսելու բարոգիչին կամ իրարու ձայնը: Ինչպէս մոգերը երբ տուն մտան իրենց ուշադրութիւնը կեդրոնացուցին Յիսուսի վրայ եւ ո՛չ թէ ուրիշ բանի մը վրայ, այնպէս ալ մենք, երբ եկեղեցի երթանք՝ պէտք է մեր հայեացքը կեդրոնացնեն Յիսուսի վրայ:

**ՄԵԿ ՏԱՐՈՒԱԾ ԸՆԹԱՑՔԻՆ  
ԿԱՐԴԱՆՔ ԱՄԲՈՂՋ  
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ**

### ՅՈՒՆՈՒԱՐ 2020

|    |                    |                  |
|----|--------------------|------------------|
| 11 | Ծննդոց 27,28       | Մատթեոս 8:18-34  |
| 12 | Ծննդոց 29,30       | Մատթեոս 9:1-17   |
| 13 | Ծննդոց 31,32       | Մատթեոս 9:18-38  |
| 14 | Ծննդոց<br>33,34,35 | Մատթեոս 10:1-23  |
| 15 | Ծննդոց<br>36,37,38 | Մատթեոս 10:24-42 |
| 16 | Ծննդոց 39,40       | Մատթեոս 11       |
| 17 | Ծննդոց 41,42       | Մատթեոս 12:1-21  |
| ՕՐ | ՃԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ       | ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ     |

### ՀԱՍՑԵՏ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,  
P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 - [facebook.com/jerak.torpaq.mekniss](http://facebook.com/jerak.torpaq.mekniss)

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ  
ԵՐԵՎԱՆԱԲՐԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ  
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ  
ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԻ  
ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Կազմակերպութեամբ Կրօնական ժողովին եւ Ազգային առաջնորդարանի «ԱՅՈ» երիտասարդական յանձնախումբին, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ, սուրբ պատարագ պիտի մատուցուի:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Հոգեւոր խորհրդածութիւնն պիտի կատարէ Լրանանի Հայոց առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Նաեւ, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-9:00, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուելեան – Եռագոյն» սրահին մէջ, Արժ. Տ. Ղեւոնդ քչն. Լոշիանան Աստուածաշունչի սերտողութիւնն պիտի կատարէ մեր ժողովուրդի զաւակներուն համար:

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ թերքը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկալին մօս: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՅՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ Խ ԾԱՒՐԱՆԵՐՈՒՄ ՀՅՅԱՆ (Ա. 119.105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 12 ՅՈՒՆՈՒԱՐ 2020

ԹԻՒ 2

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆԶԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ճ. ընթ. Հոմ. 1.1-7:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԸ ԸՆԹԱԿԱՆ 2.1-7

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

ԸՆԹ ՂՈՒԿԱՍԻ

2.1-7

Այդ օրերուն Օգոստոս կայսր Հրամանագիր հանեց իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրիոյ կառավարիչ Կիւրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայրը կ'երթար իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփի, Դաւիթի սերունդին ըլլալուն համար, Գալիլիայի նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքը՝ Դաւիթ թագաւորի ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր:

Բեթլեհէմի մէջ, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ զաւակը, որ փաթթեց խանձարուրի մէջ եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:

«ՏԵ՛ր, յիշէ՛ զիս...»

«ՏԵ՛ր, յիշէ՛ զիս, երբ քու բագաւորութեամբդ գաս» (Ղկ. 23.42): Քրիստոսի խաչակից աւազակը աշխարհի մէջ եղաւ առաջին անձը, որ այս բառերը արտասանեց: Իրմէ ետք միլիոնաւոր հաւատացեալներ կրկնեցին նոյն իր խօսքը, յայտնեցին նոյն փափաքը՝ տեղ ունենալ բագաւորութեան մէջ: «ՏԵ՛ր, յիշէ՛ մեզ, երբ քու բագաւորութեամբդ գաս»: Յիշէ՛ մեզ երկնաւոր Հօր դիմաց եւ բարեխուտ մեզի համար: Յիշէ՛ մեզ երբ գաս աշխարհը դատելու եւ գթա՛ մեր վրայ: Յիշէ՛ մեզ երբ կենաց գիրքին մէջ արձանագրուած անունները աչք անցնելու սկսիս: Յիշէ՛ մեզ երբ սկսիս յախտենական ու անդառնալի վճիռ արձակելու: Յիշէ՛ մեզ մեր մահուան պահուն եւ բարի հրեշտակներդ դրկէ մեր դիմաւորութեան: Յիշէ՛ մեզ»:

## ԱՀՈԹՔ ՅԱԶՈՂՈՒԹԵՆՔ ՄԸ ԵՏՔ

Բարերար Աստուած, միայն դուն  
ես որ զիս քու բարիքներով կ'ողո-  
ղես:

Կ'օրհնարանեմ քեզ եւ շնորհակա-  
լութիւն կը յայտնեմ այն բոլոր բա-  
րիքներուն համար՝ որ առատօրէն ա-  
նարժանիս կը պարզեւես քու սիրոյ  
գանձերէդ: Կը փառաւորեմ քեզ եւ  
ամբողջ սրտովս գոհութիւն կը յայտ-  
նեմ, միշտ եւ ամէն բանի համար, եւ  
ամէն բանէ աւելի կը խնդրեմ, որ քու  
արքայութիւնդ, արդարութիւնդ եւ ի-  
մաստութիւնդ շնորհես ինծի, որպէս-  
զի կարենամ յաւապէս մատակարա-  
րել ձրիօրէն քու տուած պարզեւ-  
ներդ, կանուխէն խորհելով եւ պատ-  
րաստուելով ապագայ ձախորդու-  
թեանց, եւ ըստ այնմ յօժարակամ ու-  
րախութեամբ կարօտեալներուն տամ  
ինչ՝ որ պէտք է իրենց, ինչպէս դուն  
կը բաւարարես իմ բոլոր պէտքերս:  
Կ'աղաչեմ, քու բարի պարզեւներուդ  
հետ միասին, նաեւ խոնարհ, հեզ եւ  
գթասիրտ հոգի մը տուր ինծի, որ-  
պէսզի քու կամքիդ եւ սուրբ օրէնքիդ  
համաձայն ապրիմ, եւ նոյնիսկ երբ  
ձախորդութեան եւ չքաւորութեան,  
վիշտերու եւ տագնապներու մատ-  
նրիմ, կարենամ տոկալ եւ կրել քա-  
ջութեամբ, անտրտունջ եւ գոհունակ  
սրտով, միշտ շնորհակալութիւն  
յայտնելով քու սուրբ կամքիդ հա-  
մար. որովհետեւ քեզմէ՛ է ամէն բան,  
եւ դո՛ւն ես, որ կը հատուցանես մեր  
գործերուն եւ մտածողութեան հա-  
մաձայն: Քեզի փառք յաւիտեանս:  
Ամէն:



### ՊՈՂՈՍ ԱՌԱՋԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒԹՅՈՒՆ

1.1-7

Ես՝ Պողոս, ծառան եմ Քրիստոս  
Յիսուսի, որ զիս կանչեց իր առաքեալը  
ըլլալու եւ պաշտօն տուալ Աստուծոյ  
Սւետարանը բարողելու: Սուրբ գիրքե-  
րուն մէջ արանագրուած կը գտնէք,  
թէ Աստուած կանուխէն իր մարգարէ-  
ներուն միշոցաւ խոստացաւ տալ այս  
աւետիսը, որ կը վերաբերի իր Որդիին՝  
մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ իբրեւ  
մարդ՝ Դաւիթի սերունդէն ծնաւ, բայց  
որ իբրեւ Աստուծոյ Որդի յայտնուե-  
ցաւ, երբ իր Սուրբ Հոգիին զօրու-  
թեամբ մեռելներէն յարութիւն առաւ:  
Ան էր, որ ինծի առաքեալ ըլլալու  
շնորհը տուալ, որպէսզի իր անունին  
հաւատալու եւ հենազանդելու հրաւի-  
րեմ բոլոր ազգերը, որոնց կարգին  
դուք ալ Յիսուս Քրիստոսի պատկա-  
նելու կանչուեցաք:

Ողոն'յն բոլորիդ որ Հոռոմ կը բնա-  
կիք: Զեզի՝ որ Աստուած սիրեց եւ իր  
սուրբ ժողովուրդը ըլլալու կանչեց:  
Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յի-  
սուս Քրիստոս շնորհ եւ խաղաղու-  
թիւն պարգեւեն ձեզի:

### ԱՌԱԿ 2

Եթէ իմաստութիւնը միշտ ներկայ ըլ-  
լայ մէջդ եւ գիտութիւնը անձիդ հա-  
մար օգտակար նկատես, այն ատեն  
բարի խորհուրդները ֆեզ պիտի պահեն  
եւ մաքուր մտածումները ֆեզ պահպա-  
նեն, որպէսզի ֆեզ փրկեն չար նանա-  
պարհէն եւ նենգամիտ մարդէն:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Քրիստոսի անունին, այսինքն՝  
Յիսուս անունը դրուելու յիշատա-  
կութիւնն է: Յիսուս կը բարգմանուի  
Փրկիչ, ինչպէս հրեշտակին կողմէ  
դնել հրամայուած էր Մարիամու  
Աւետման ատեն (Ղուկ. Ա.31) եւ ինչ-  
պէս իրօք ալ դրուեցաւ ծնելուն Ը.  
օրը թլփատութեան արարողութեան  
առթիւ (Ղուկ. Բ. 21), Հրէական  
օրէնքին համեմատ: Անուանակոչու-  
թիւնն իբր առանձին տօն նշանակ-  
ւած չէ Տօնացոյցին մէջ, այլ նոր օ-  
րացոյցները սովորութիւն ըրին այս-  
պէս նշանակել Ծննդեան Ը. օրը,  
Յունուար 13-ին, փոփոխելով Տօնա-  
ցոյցին նշանակած թլփատութեան  
տօնը: Յիսուս անունը գործածուած է  
սովորաբար աւետարանին մէջ, բայց  
այժմ աւելի գործածական է Քրիս-  
տոսի անունը, որ է Մեսիա՝ Օծեալ:  
Աւետարանին մէջ Քրիստոսի տըր-  
ւած է նաեւ Էմմանուէլ անունը (Մտք.  
Ա. 23), հետեւելով Եսայեայ մար-  
գարելութեան (Եսայ. Է. 14)

### ԱՌԱԿ. ԳԼՈՒԽ ՃԵ 10-12

Բարի մարդուն իրատը ընդունելի է  
հարազատներուն համար, իսկ անոնք  
որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝  
վարկաբեկիչ վախճան պիտի ունենան:

Եթէ մահն ու կորուստը յայտնի են  
Տիրոց, որքան եւս առաւել՝ մարդոց սր-  
տերը:

Անուղայ մարդը չի սիրեր զինք  
յանդիմանողը եւ չի հաղորդակցիր գի-  
տակից մարդուն հետ:

## ՄՇՏԱՊԻՍ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԿԱՐԴԱՌ

Սովորութիւն դարձուցէ՛ք միշտ  
որշակի ժամերու կարդալ Աստուածա-  
շունչը: Ամենէն յարմարը առաւտեան  
կարդալն է: Կարդալ սկսելէ առաջ  
Սուրբ Հոգիէն խնդրել, բացարել Տիրոջ  
խօսքը, որպէսզի հասկնաս եւ պատ-  
գամները կիրարկես կեանքիդ մէջ: Այն  
առեն Սաղմոսերգուին պէս պիտի  
կարենաս ըսել: «Քու խօսքդ իմ կեանքիս  
ճրագն է» (Սաղմոս 119.105): Աստուածա-  
շունչ կարդալը թող հիմնաւորուի քու  
կեանքիդ մէջ:

### ԱՆԴԱԿԱՐ ԱՂՈԹԵՆՔ

Աստուածաշունչ կարդալէ զատ  
պէտք է աղօթել: Սկիզբը դժուար կ'ը-  
լրայ: Կը թուի, թէ Սատանան կը փակէ  
բերանդ, եւ մտածումներդ կը խառ-  
նուին: Աղօթելու ժամանակդ ալ քեզ կը  
մղէ, որ քնանաս: Այս պարագային՝  
բարձրածայն աղօթէ: Եւ մի՛ կարծեր, թէ  
պէտք է անպայման գեղեցիկ աղօթել:  
Կարեւորը սիրուն խօսքերը չեն.  
Աստուած մեր սիրտին կը նայի: ...

ԽՐԱ. ԲՈԼՈՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐԻՆ.  
ՅՈՎՀԱՆՆԻՍ ԵՐՁՆԿԱՑԻ  
ՀԱԻՍՏՔԻ ՄԱՍԻՆ

Հաւատքը մարդուն սիրտին մէջ ար-  
մատացած տունկ է, որուն արմատը՝  
Հայրն է, արմատին վրայ գտնուող ոս-  
տը՝ Որդին է, տունկին եւ ոստին վրայի  
անթառամ ծաղիկը՝ Ս. Հոգին, իսկ  
քաղցրահամ պտուղը՝ բոլոր բարի գոր-  
ծերն են, որովհետեւ պտուղը՝ արմա-  
տէն, ոստէն եւ ծաղիկէն կը յառաջանայ,  
ինչպէս բարի գործերը՝ հաւատքէն: Ինչ-  
պէս, որ ծառը առանց պտուղի գեղեցիկ  
չերեւիր եւ առանց ծառի պտուղ ըլլար,  
նոյնպէս հաւատքը առանց գործի վա-  
յելուչ չէ, ոչ ալ գործերը՝ առանց  
ճշմարիտ եւ ուղիղ հաւատքի: